# ՍՈՎՈՐԵ՛Ք ԲԱՆԱՎԻՃԵԼ

**Այս աշխատանքի նպատակն է՝** զարգացնել սովորողների՝ սեփական կարծիքը հիմնավորելու, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, փոխզիջումային լուծումներ գտնելու, վճիռներ կայացնելու կարողությունները:

**Ընթացքը:**

1.Մասնակիցները բաժանվում են երեք խմբի.

Ա խումբ – Ակունք գյուղի բնակիչներ,

Բ խումբ – Գետաբերան գյուղի բնակիչներ,

Գ խումբ – Մարզպետարանի ներկայացուցիչներ:

2. Յուրաքանչյուր խմբին տրվում է իրավիճակը նկարագրող թերթիկ: Ահա դրա բովանդակությունը:

Ակունք գյուղը գտնվում է բարձր լեռներից հոսող Սառնաղբյուր գետի վերին հոսանքի մոտ: Բնությունն այստեղ քարքարոտ է, քիչ նպաստավոր գյուղատնտեսական աշխատանքների համար: Սակավաթիվ ցանքատարածությունները ոռոգելու համար մարդիկ ստիպված են լինում գետից ջուրը պոմպով մղելու դեպի վեր, ինչը բավականին ծախսատար է: Արոտավայրերի բացակայության պատճառով ձեռնտու չէ նաև անասնապահությամբ զբաղվելը: Ահա թե ինչու գյուղի տղամարդկանց զգալի մասը մեկնում է սեզոնային արտագնա աշխատանքի:

Ի տարբերություն Ակունք գյուղի՝ Գետաբերան գյուղը գտնվում է հարթավայրում, որտեղ Սառնաղբյուր գետի ջրերը ինքնահոս կերպով ոռոգում են ցանքերն ու արոտավայրերը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով և՛ գյուղատնտեսության, և՛ անասնապահության համար: Գյուղում գործում է պահածոների գործարան, որը գյուղացիների զգալի մասին ապահովում է աշխատանքով:

Ակուք գյուղի կենսամակարդակը բարելավելու նպատակով մարզպետարանը որոշել է գյուղին մոտ տեղամասում ամբարտակով փակել գետի հունը, բարձրացնել ջրի մակարդակը և կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան: Դա հնարավորություն կտա խնայելու էլեկտրաէներգիան, ոռոգելի դարձնելու Ակունքի հողատարածքները, զբաղվելու ձկնաբուծությամբ, ստեղծելու նոր աշխատատեղեր:

Այս գաղափարին կտրականապես դեմ է Գետաբերան գյուղի հանրությունը: Նրանց կարծիքով այս նախագիծը մեծ վնաս կարող է հասցնել բնութ-

յանը. ժամանակ առ ժամանակ կարող է չորանալ գետի հունը, կվնասվի նրա կենդանական և բուսական աշխարհը: Բացի այդ, կխախտվի նաև ցան-քատարածությունների անխափան ոռոգումը:

3. Խմբերի միջև ծավալվում է 30 րոպե տևողությամբ բանավեճ, որի ընթացքում Ա և Բ խմբերն առանց փոխզիջման պնդում են իրենց տեսակետ-ները և փորձում փաստերով հիմնավորել դրանք, իսկ Գ խումբը աշխատում է առաջարկել փոխզիջումային այնպիսի տարբերակ, որն ընդունելի կլինի երկու կողմերի համար:

*4.* Բանավեճին հետևում են մնացած մասնակիցները և գնահատող հանձնախումբը: Երեք խմբերից հաղթում է նա, ով ավելի հիմնավոր և փաս-տարկված է ներկայացնում իր տեսակետը: